

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/

N 28 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 15.03.2024թ. նիստի օրակարգը /կցվում է/:

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 15

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. Մարկոսյանը և Մ. Դափումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ



**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՆԻՍՏԻ**

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Աշտարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:  
*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*
2. Աշտարակի համայնքային սեփականության 2023թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:  
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
3. Շարժական գույքը նվեր ընդունելու առաջարկության մասին:  
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*
4. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:  
*/Զեկուցող՝ Է. Փարվանյան/*
5. <<Աշտարակի մշակույթի պալատ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:  
*/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/*
6. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/*
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
8. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
11. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում և Օշական բնակավայրում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
12. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:  
*/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/*
13. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրը սահմանելու մասին:  
*/Զեկուցող՝ Ս. Սահակյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2023Թ. ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Ձեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 29 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման արդյունքներն՝ ըստ համայնքի ենթակա կազմակերպությունների:

2. Հաստատել հանձնաժողովների կողմից դուրս գրման ներկայացված գույքի ցանկը /փաթեթը գտնվում է ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնում/:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 15

ԴԵՄ - 0

ՁԵՆՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՒ ԱՐՇԱԿՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. Մարկոսյանը և Մ. Դադոմյանը չեն մասնակցել քվեարկությանը:

ՆԻՍԱՆ ՎԱՐՈՂ՝

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՆՎԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

N 30 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հիմք ընդունելով Արմեն Անթանյանի 05.03.2024թ. թիվ 2631 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

- Համաձայնություն տալ Արմեն Անթանյանին սեփականության իրավունքով պատկանող GAZ մակնիշի 36 UC 927 հաշվառման համարանիշի /տիպարը՝ VS-22.02 /GAZ-3307// ավտոաշտարակն Աշտարակ համայնքին նվիրելու առաջարկությանը:
- Վերը նշված ավտոաշտարակի ձևակերպման ծախսերը կատարել համայնքի բյուջեի հաշվին:
- Նշված գործընթացն ավարտելուց հետո ավտոաշտարակն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել <<Բարեկարգում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
- Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 15

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՒ ԱՐՇԱԿՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. Մարկոսյանը և Մ. Դափումյանը չեն մասնակցել քվեարկությանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Զեկուցող՝ Է. ՓԱՐՎԱՆՅԱՆ/

N 31 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող Օշական գյուղում գտնվող անշարժ գույքից (հասցե՝ Մաշտոցի փողոց 105, անշարժ գույքի սեփ. վկ.՝ N 27032020-02-0035) 160մ<sup>2</sup> տարածք (2-րդ հարկ) անհատույց օգտագործման իրավունքով ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի աջակցությամբ և Հայաստանի սոցիալական աշխատողների Ասոցիացիայի կողմից ստեղծված ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց և ընտանիքներին սոցիալ - հոգեբանական աջակցություն մատուցող կենտրոնին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 15

ԴԵՄ- 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ա. Մարկոսյանը և Մ. Դադուրմյանը չեն մասնակցել քվեարկությանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

<<ԱՇՏԱՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Զեկուցող՝ Շ. ՔՈԹԱՆՅԱՆ/

N 32 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34, 37 հոդվածների  
պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել <<Աշտարակի մշակույթի պալատ>> համայնքային ոչ առևտրային  
կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա  
որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 16

ԴԵՄ- 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ  
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ  
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ս. Օվոյանը չի մասնակցել քվեարկությանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### «ԱՇՏԱՐԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Աշտարակի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու կարգադրություններով և սույն կանոնադրությամբ:
3. Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Արագածոտն մարզ, Աշտարակ համայնք, ք.Աշտարակ, Ներսես Աշտարակեցու հրապարակ 5 հասցեում:
4. Կազմակերպությունը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Կազմակերպության անվանումն է՝  
հայերեն լրիվ՝ «Աշտարակի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն  
հայերեն կրճատ՝ «Աշտարակի մշակույթի պալատ» ՀՈԱԿ  
ռուսերեն լրիվ՝ «Дворец культуры Аштарак» общинная некоммерческая организация общины Аштарак  
ռուսերեն կրճատ՝ «Дворец культуры Аштарак» ОНО  
անգլերեն լրիվ՝ «Cultural Palace of Ashtarak» community non-commercial organization of Ashtarak community  
անգլերեն կրճատ՝ «Cultural Palace of Ashtarak» CNCO
6. Կազմակերպությունն ունի ՀՀ զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուներով:
7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
8. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:
11. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

## **II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

12. Կազմակերպության նպատակն ու գործառույթներն են՝
  - մշակութային գործունեության իրականացում, ինչպես նաև գրադարանային գործունեություն,
  - համայնքի բնակչության մշակութային-տեղեկատվական սպասարկում, մշակույթի մասսայականացում, մշակութային գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն,
  - մշակույթի և այլ արժեքների տարածում և լուսաբանում, համայնքի բնակչության քաղաքական, բարոյական, գեղագիտական դաստիարակություն, ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրության ձևավորում, մասնագիտական որակի զարգացում, համապատասխան գիտելիքների ուսուցում ու տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում,
  - մշակութային ֆոնդի պաշտպանվածության և անվտանգության ապահովում,
  - թատերական ավանդույթների վերականգնում, թատրոն-ստուդիայի կամ թատերական խմբերի ձևավորում, թատերական խմբերի հյուրընկալում,
  - ազգային և արտասահմանյան պետությունների մշակութային, գիտական հարստությունների, միջազգային հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն,
  - հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծում,
  - համերգների, միջոցառումների, ցուցադրությունների կազմակերպում,
  - իրականացնում է նաև սույն կանոնադրությամբ չսահմանված և օրենքով չարգելված այլ գործառույթներ:
13. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ միայն հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

## **III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

15. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ Աշտարակ համայնքի ղեկավարը և օրենքով սահմանված կարգով նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը:



16. Կազմակերպության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
17. Համայնքը հանդիսանում է կազմակերպության հիմնադիրը, իսկ համայնքի ղեկավարը՝ համայնքի կողմից լիազորված մարմինը:
18. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
- կազմակերպության հիմնադրումը,
  - կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
  - կազմակերպությունը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
  - կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
  - կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,
  - կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
  - կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
19. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
20. Համայնքի ղեկավարը՝
- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
  - վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,
  - կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
  - լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրանց գործունեության վերստուգման արդյունքները,
  - վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,
  - ՀՀ օրենսդրությամբ համայնքի ավագանու որոշմամբ, կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,
  - Հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,
  - կազմում է կազմակերպության հաստիքացուցակը, եկամուտների ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում ավագանու հաստատմանը,
  - իրականացնում է օրենքով, ավագանու որոշումներով, իրավական այլ ակտերով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
21. Կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը, պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է լիազորված մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից պաշտոնի (նշանակվում և ազատվում է ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով):

### Տնօրենը՝

- իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը,
  - օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
22. Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

### Տնօրենը՝

- առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ,
  - առաջարկության տեսքով համայնքի ղեկավարին է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
  - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում նաև ֆինանսական միջոցները,
  - Տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
  - Աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,
  - Բանկում բացում է հաշվարկային հաշիվներ,
  - Կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալի (ների) և աշխատակիցների միջև,
  - Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմանում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
  - Վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,
  - Ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,
  - Ապահովում է կազմակերպության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներկայացնում հիմնադրին,
  - Գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը պատճառած վնասի համար,
  - Իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
  - Հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները:
23. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է տեղակալը կամ կազմակերպության աշխատակիցներից մեկը:



#### IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

24. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված կամ սեփականության իրավունքով նրան հանձնվող (ամրացվող), ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:
- Հիմնադրման ժամանակ հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ: Հիմնադրման ժամանակ կազմակերպության հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն ախատավարձի տասնազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:
25. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, առանց օտարման իրավունքի:
26. Կազմակերպության սեփականության պահպանման պատասխանատվությունը կրում է կազմակերպությունը:
27. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
28. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:
29. Կազմակերպությունը իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
- Կազմակերպությունը կամ կազմակերպության տնօրենը իրավունք չունի հանդես գալ որպես երաշխավորող անձամբ կամ կազմակերպության անհատույց գույքով, դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման այլ անձանց հանձնելու, եթե այլ բան նախատեսված չէ օրենքներով:
30. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, բացառությամբ հիմնադրի և ավագանու որոշմամբ սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են, բացառությամբ գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքի բյուջե: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
31. Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
32. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
33. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

Կազմակերպությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

34. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

- բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցներ,
- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները:

35. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առեվտրային կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

36. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

37. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրն ու լիազոր մարմինը:

38. Կազմակերպության կողմից գործարքները (որոշման ընդունմանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հիսուն տոկոսից ավելին) կատարվում է Համայնքի ղեկավարի համաձայնությամբ:

39. Լիազոր մարմնի համաձայնությամբ կարող է իրականացնել տոմսերի վաճառք՝ գները նախօրոք համաձայնեցնելով վերջինիս հետ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

## **V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

40. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

41. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

## **VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

42. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

43. Կազմակերպության լուծարման դեպքում գույքն հանձնվում է համայնքին:

44. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

## **VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

45. Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

ԾԱՌԱՀԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արձ.- 36

/Զեկուցող՝ Ս. ՄԽԻԹԱՐՅԱՆ/

N 33 - Ա ՈՐՈՇՈՒՄ

Հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և քնապահպանության բաժնի եզրակացությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ Մ-3 միջպետական ավտոճանապարհի /ԿՄ 35+500-39+535/ հատվածի հիմնանորոգման հետ կապված ծառերի մի մասը հատելու, իսկ մյուս մասն էլ վերատնկելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Շինարարական աշխատանքների ավարտից հետո հատված ծառերի փոխարեն տնկել առավել բարձրարժեք ծառեր:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 16

ԴԵՄ-1

ՁԵՆՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ  
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՅԱՆ

ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ  
ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ  
ՄԻՇԱ ՄԿՐՏՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՆԻՍԸ ՎԱՐՈՂ՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ



# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15-ը մարտի 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 11.12.2023թ. N 162-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

N 34 - Ն ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների  
պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝

## **Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման հավելված 1-ը  
շարադրել նոր խմբագրությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԿՈՂՄ - 17

ԴԵՄ - 0

ՁԵՌՆՊԱՀ - 0

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ  
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ  
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ  
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ  
ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ  
ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ  
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ  
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ  
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ  
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ  
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ  
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Շ. ՎԱՀԱՆՅԱՆ



**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024Թ. ՍԱՀՄԱՆՎԱԾ  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓ /դրամ/
1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (քացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
<b>ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝</b>	
մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ. <b>գյուղական բնակավայրերի համար.</b>	45000 <b>15000</b>
<b>բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</b>	
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	30000 X ԳԳ
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	100000 X ԳԳ
- 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հարյուր հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	200000 X ԳԳ
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	
<b>գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</b>	
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	5000 X ԳԳ
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասը հազար դրամի և շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գործակցի արտադրյալը	10000 X ԳԳ

<p>1.1) Շինարարության թույլտվության ժամկետները շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության ժամկետի մինչև 20 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով առաջին անգամ երկարաձգելու դեպքում 1) կետով սահմանված տեղական տուրքի դրույքաչափը հաշվարկվում է 0,5 գործակցի կիրառմամբ: Շինարարության թույլտվության ժամկետների հաջորդ երկարաձգումների դեպքում (անկախ երկարաձգվող ժամկետների տևողությունից) շինարարության թույլտվության եկարաձգման համար տեղական տուրքը հաշվարկվում է 1) կետով սահմանված դրույքաչափերով:</p>		
<p>Շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.</p>		
Գոտի	Գոտիականության գործակից	
1-4	5.0	
5-8	4.0	
9-12	3.0	
13-16	2.0	
17-20	1.0	
<p>2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝</p>		
<p>ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ, <b>գյուղական բնակավայրերի համար.</b></p>		<p>9000</p> <p><b>3000</b></p>
<p>բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,</p>		
<p>գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.</p>		
<p>3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ. <b>գյուղական բնակավայրերի համար.</b></p>		<p>15000</p> <p><b>5000</b></p>



4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ. <b>ա/գյուղական բնակավայրերի համար.</b>	300000 <b>200000</b>
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.	60000
6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.	50000
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝	
<b>ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</b>	
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,	5000
<b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b>	3750
<b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b>	2500
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,	11000
<b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b>	8250
<b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b>	5500
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,	14000
<b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b>	10500
<b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b>	7000

<p>- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմադրյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b></p>	<p>21000</p> <p>15750</p> <p>10500</p>
<p>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմադրյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b></p>	<p>26000</p> <p>19500</p> <p>13000</p>
<p>- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմադրյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b></p>	<p>46000</p> <p>34500</p> <p>23000</p>
<p><b>բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար</b></p>	
<p>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմադրյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհար, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարուր/ - գործակից 0.5</b></p>	<p>5000</p> <p>3750</p> <p>2500</p>

<p>- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհայր, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարոտ/ - գործակից 0.5</b></p>	<p>11000</p> <p>8250</p> <p>5500</p>
<p>- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհայր, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարոտ/ - գործակից 0.5</b></p>	<p>14000</p> <p>10500</p> <p>7000</p>
<p>- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ,</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհայր, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարոտ/ - գործակից 0.5</b></p>	<p>21000</p> <p>15750</p> <p>10500</p>
<p>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.</p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 11-12 գոյրիականություն /Կարբի, Օհանավան, Ագարակ, Արտաշավան, Բյուրական, Բազմաղբյուր, Ոսկեվազ, Սաղմոսավան, Ուշի, Փարպի, Օշական/ - գործակից 0.75</b></p> <p><b>Գյուղական բնակավայրերի համար 13-18 գոյրիականություն /Անտառուր, Ղազարավան, Ոսկեհայր, Սասունիկ, Ուջան, Նոր Երզնկա, Աղծք, Տեղեր, Կոշ, Օրգով, Արուճ, Արագածուր, Ավան, Դպրեվանք, Նոր Եղեսիա, Նոր Ամանոս, Վ. Սասունիկ, Լեռնարոտ/ - գործակից 0.5</b></p>	<p>26000</p> <p>19500</p> <p>13000</p>



- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր հազար մեկ դրամ.	46000
